600.0272.21.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2017 թվականի №272Ա
քաղ. Երևան

«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) չի կատարել իրեն տրամադրված «Որոտան-7» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0497 լիցենզիայով ամրագրված էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի համար հերթական տարեկան պետական տուրքի՝ մինչև սույն թվականի մայիսի 22-ը վճարման պարտավորությունը,

բ) 2017 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 7.5.2.1 ենթակետի և 34-րդ հոդվածի համաձայն Ընկերության կողմից պետական տուրքի վճարման պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը սույն թվականի մայիսի 25-ին փաստացի վճարել է հերթական տարեկան պետական տուրքը և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կարճել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2017 թվականի մայիսի 23-ից Ընկերության նկատմամբ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 7.5.2.1 ենթակետի և 34-րդ հոդվածի համաձայն

պետական տուրքի վճարման պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
21 հունիսի 2017թ.